ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«30» 01 2025թ.
No 001046

**«ՀԴՄ ՇՏՐԻԽ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ՍԼԱՎԻԿ ԴՈԽՈՅԱՆԻՆ**

(Հասցե՝ Երևան, Ավան, Նարեկացի թղմ., 54 շ., բն. 60)

Հարգելի՛ պարոն Դոխոյան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ **Օրենք**) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված լիազորությունն իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված և ղեկավարվելով Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1. «ՀԴՄ շտրիխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (**այսուհետ նաև՝ Ընկերություն**) կողմից 2024 թվականի ընթացքում ՀԴՄ սպասարկման ծառայությունների համար կնքված պայմանագրերի վերաբերյալ՝ համաձայն Ձևանմուշ 1-ի (MS Excel ձևաչափով),

2. 2024 թվականին ՀԴՄ սպասարկման ծառայություններից Ընկերության ստացված հասույթների վերաբերյալ՝ ըստ գնային կատեգորիաների՝ համաձայն Ձևանմուշ 2-ի (MS Excel ձևաչափով),

3. 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող յուրաքանչյուր գնային կատեգորիայի մասով Ընկերության կողմից 5 առանձին տնտեսավարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի հինգ տարբեր օրինակներ:

4. Ընկերության կողմից տնտեսավարող սուբյեկտների հետ 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործող պայմանագրերի շրջանակներում ՀԴՄ սպասարկման ծառայության համար առաջարկվող տարբեր գների սահմանման չափանիշները և հիմնավորումները՝ կցելով հիմնավորող փաստաթղթեր,

5. 2024 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում Ընկերության կողմից իրականացված ծախսերի և այլ գործունեությունից հասույթի վերաբերյալ՝ համաձայն Ձևանմուշ 3-ի (MS Excel ձևաչափով, 2024 թվականի մնացած ամիսներում ճշգրտումներ կատարելու անհրաժեշտության դեպքում կարող եք տեղեկատվությունը ներկայացնել ամբողջ տարվա կտրվածքով),

6. Ընկերության կողմից 2024 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրացված և սպասարկված հսկիչ-դրամարկղային մեքենաների ծավալների վերաբերյալ՝ բնեղեն և արժեքային արտահայտությամբ՝ համաձայն Ձևանմուշ 4-ի (MS Excel ձևաչափով, 2024 թվականի մնացած ամիսներում ճշգրտումներ կատարելու անհրաժեշտության դեպքում կարող եք տեղեկատվությունը ներկայացնել ամբողջ տարվա կտրվածքով):

Տեղեկացնում ենք նաև, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

4. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

5. Օրենքի 93-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

6. ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով վարչական վարույթով ապացույց կամ բացատրություն կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

7. ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով վարչական վարույթով սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու համար սահմանված է քրեական պատասխանատվություն:

8. Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Կատարող՝ Էդիտա Անանյան
Մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (203)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 21 փետրվարի 2025 թվական:

Հավելված 1

ՑԱՆԿ

Ընկերության կողմից 2024 թվականի ընթացքում ՀԴՄ սպասարկման ծառայությունների համար կնքված պայմանագրերի վերաբերյալ

Հ/Հ	Տնտեսավարող սուբյեկտի անվանում	ՀԴՄ սպասարկման ծառայության ամսեկան գին	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Պայմանագրի դադարեցման ամսաթիվ
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				

Հավելյալ տողերի անհրաժեշտության պարագայում հարկավոր է ավելացնել նոր տող:

*Տեղեկանքն էլեկտրոնային եղանակով անհրաժեշտ է ուղարկել e.ananyan@competition.am և info@competition.am էլ. հասցեներով:

**Ձևանմուշի էկելտրոնային տարբերակը ստանալու համար անհրաժեշտ է էլեկտրոնային նամակ ուղարկել e.ananyan@competition.am հասցեով՝ նամակի "subject" կամ "тема" դաշտում նշելով "Form" բառը:

ՄՎՎ վարչություն, Էդիտա Անանյան, (060) 830-840 (203)

Ձևանմուշ 2

ՏԵՂԵԿԱՆՔ

2024 թվականին ՀԴՄ սպասարկման ծառայություններից Ընկերության ստացված հասույթների վերաբերյալ՝ ըստ գնային կատեգորիաների

Հ/Հ	Գնային կատեգորիա	Սպասարկված ՀԴՄ-ների քանակ	ՀԴՄ սպասարկումից հասույթ
1	1800		
2	2000		
3	....		
4	....		
5	...		
6			

Հավելյալ տողերի անհրաժեշտության պարագայում հարկավոր է
ավելացնել նոր տող:
*Տեղեկանքն էլեկտրոնային եղանակով անհրաժեշտ է ուղարկել
e.ananyan@competition.am և info@competition.am էլ. հասցեներով:
**Ձևանմուշի էկելտրոնային տարբերակը ստանալու համար անհրաժեշտ է
էլեկտրոնային նամակ ուղարկել e.ananyan@competition.am հասցեով՝
նամակի "subject" կամ "тема" դաշտում նշելով "Form" բառը:
ՄՎՎ վարչություն, Էդիտա Անանյան, (060) 830-840 (203)

Ձևանմուշ 3

ՏԵՂԵԿԱՆՔ

2024 թվականի դեկտեմբեր ամսվա Ընկերության կողմից իրականացված ծախսերի և այլ գործունեությունից հասույթի վերաբերյալ

Հ/Հ	Ծախսի տեսակը	2024թ. դեկտեմբեր
1	Ուղղակի ծախսեր, այդ թվում՝	
	ՀԴՄ իրացման ուղղակի ծախսեր	
	...	
	...	
	ՀԴՄ սպասարկման ուղղակի ծախսեր	
	...	
	...	
	Այլ գործունեության համար իրականացվող ուղղակի ծախսեր	
	...	
	...	
2	Անուղղակի ծախսեր,այդ թվում՝	
	Վարչական ծախսեր, այդ թվում	
	...	
	...	
	Ֆինանսական ծախսեր	
	...	
	...	
	այլ ծախսեր (նշել)	
	...	
	ՀԴՄ իրացումից և սպասարկումից բացի, այլ գործունեությունից ստացված հասույթ	

Ձևանմուշ 4

ՏԵՂԵԿԱՆՔ

Ընկերության կողմից 2024 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում իրացված և սպասարկված հսկիչ-դրամարկղային մեքենաների ծավալների վերաբերյալ՝ բնեղեն և արժեքային արտահայտությամբ

Հ/Հ	2024թ. հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն			
	Իրացման ծավալ		Սպասարկման ծավալ	
	քանակ (հատ)	արժեք (դրամ)	ՀԴՄ քանակ (հատ)	արժեք (դրամ)
1				
2				

Հավելյալ տողերի անհրաժեշտության պարագայում հարկավոր է ավելացնել նոր տող:
*Տեղեկանքն էլեկտրոնային եղանակով անհրաժեշտ է ուղարկել e.ananyan@competition.am և info@competition.am էլ. հասցեներով:
**Ձևանմուշի էկելտրոնային տարբերակը ստանալու համար անհրաժեշտ է էլեկտրոնային նամակ ուղարկել e.ananyan@competition.am հասցեով՝ նամակի "subject" կամ "тема" դաշտում նշելով "Form" բառը:
ՄՎՎ վարչություն, Էդիտա Անանյան, (060) 830-840 (203)